

Թեմա 2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ողջույն, ֆինանսական կրթության դասընթացի շրջանակներում այսօր խոսելու ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի մասին:

Ֆինանսական համակարգի մաս կազմող հիմնական տարրերը կարող ենք բաժանել երեք խմբի.

- Մասնավոր,
- Պետական,
- և միջազգային հատվածներ:

Մասնավոր հատվածում ներառված են բոլոր տեսակի ֆինանսական կազմակերպությունները, որոնք մեզ տրամադրում են բազմաթիվ ֆինանսական ծառայություններ: Այդպիսի կազմակերպություններ են բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, գրավատները, արտարժույթի փոխանակման կետերը և այլն: Նշենք, որ այս բոլոր կազմակերպությունները շահույթ հետապնդող են:

Պետական հատվածում կարող են լինել ինչպես պետական մարմիններ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը, նախարարությունները, այնպես էլ պետության կողմից ստեղծված ֆինանսական կառույցներ: Վերջիններս, ամեն դեպքում, պետական չեն: Օրինակ՝

- Ֆինանսական համակարգի հաշտարարը,
- Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը,
- Ավտոապահովագրողների բյուրոն,
- ԱՔՌԱ վարկային ռեգիստրը,
- ԱրՔա վճարային համակարգը և այլն:

Ֆինանսական համակարգի վերջին օղակը՝ **միջազգային հատվածը**, ներառում է բոլոր այն միջազգային կազմակերպությունները, որոնք համագործակցում են մասնավոր և պետական հատվածների ֆինանսական կառույցների և կազմակերպությունների հետ: Դրանց օրինակներ են՝ Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը, Եվրասիական զարգացման բանկը և այլն:

Այժմ մենք առավել մանրամասն կքննարկենք հայաստանյան ֆինանսական համակարգի մասնավոր և պետական հատվածների որոշ մասնակիցների:

- **Մկսենք մասնավոր հատվածից և առաջինը դիտարկենք բանկային համակարգը:**

Երբեմն մարդկանց մոտ բանկային համակարգի նկատմամբ անվստահություն է առաջանում, բայց կարելի է նշել որ բանկերը և ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունները պետք է ունենան Կենտրոնական բանկի լիցենզիան որը արդեն վստահություն է ներշնչում:

Իսկ ի՞նչ է բանկային գործունեությունը: Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով: Բանկային գործունեություն է նաև համարվում հաշիվներ բացելն ու վարելը, վճարահաշվարկային ծառայություններ մատուցելը, արժեթղթերի թողարկումը, գնումը, վաճառքն ու սպասարկումը և այլն: Իսկ եթե խոսենք ավելի պարզ բառերով, ապա բանկը կարելի է դիտարկել որպես կառույց, որը հավաքագրում է տնտեսության մեջ ձևավորված ժամանակավորապես ազատ դրամական միջոցները՝ այնուհետև դրանք տեղաբաշխելու նպատակով: